

# ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱԿՈՒՔ ՔՅՈՍԵՅՑԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

## «ԱՐՁՈՒՆ ԿԱՅԷՔ» ԲՆԱԲԱՆՈՎ ՔԱՐՈՉԸ ԵՎ ՆՐԱ ՃԵՂԻՆԱԿԸ

Միջնադարում ընդունված սովորույթի համաձայն, նվազ հայրնի մատիենագիրներն իրենց աշխափությունների «երկարակեցությունը» ապահովելու նպարակով դրանք վերագրում էին առավել մեծ համբավ և անվիճելի հեղինակություն նկարված հայրերի գրքներ: Այդ սովորույթը հարգվում էր նաև հայ միջնադարում: Խնդրո առարկա քարոզի պարագան հայ իրականության մեջ այդ սովորույթի կենսունակության վկայություններից է: Խնդրո որոշ ձեռագերում (ՄՄ ձեռ. 4749, թ. 370ա-374ա, 2890, թ. 284բ-287բ, 3239, թ. 200ա-208ա) Ս. Հովհանն Օսկերերանի անոնով առկա «Ի վեցերորդ Կիրակին Մեկնութիւն Անեպարանին» խորագրով երկի մասին է, որի հունարեն բնագիրը մեզ հայրնի չէ: Բացակայում են նաև այս քարոզի այլալեզու թարգմանությունները:

Երկում հիշվում է Հովհաննես Սարկավագի մի աշխափությունը<sup>1</sup>: Քարոզի սուրբգրային վկայությունները համապարախանում են Աստվածաշնչի հայերեն ընկայալ թարգմանությանը: Այս փաստերն ինքնին ենթադրել են դալիս, որ վպյալ միավորը ձևավորվել է հայ իրականության մեջ: Քարոզը մեծ ու փոքր դարրերություններով հանդիպում է նաև Հովհաննես Ծործորեցու (ԺԳ-ԺԴ դդ.)<sup>2</sup>, Գրիգոր Տաթևացու (†1409)<sup>3</sup> և Գևորգ Երզնկացու (†1416)<sup>4</sup> անուններով: Ելմելով այն իրողությունից, որ այս հեղինակներից ժամանակով առաջինը Հովհաննես Ծործորեցին է հարկ է մրածել, որ քարոզի իրական հեղինակը կամ (ոսկերերանին մի համարնույթ ճառի հեփառությամբ) այն խմբագրողը նա է: Խնչպես երևում է, Ծործորեցու քարոզը լայնորեն օգլագործվել է (դեղ-դեղ բառացի, երեխն էլ իմաստային վերաշարադրանքով) եիշյալ մատիենագիրների կողմից: Այդ են ցույց դրալիս հեփելյալ հանդիպադիր հապվածները.

<sup>1</sup> Ի դեպ, արդեն իրավացիորեն Ակատված է, որ այստեղ Սարկավագի ամումով վկայակոչված «Ի գիրս Դատաստամաց»-ը ոչ թե Դատաստամագիրը է, այլ դատարարակամ, կամոմախրատակամ բռույթ ումեցող մի երկ. տե՛ս Կամոմագիրը Բայոց, Ա., աշխատ. Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 9 (տողատակ):

<sup>2</sup> «Սուրբ Յօհաննոյ Երզնկացու», զոր մականուն Ծործորեցի յորշորչի. Մեկնութիւմ աւետարամի Սարկոսի ի և Կիրակէիմ աղոմացից, վասն մարտու և կատարածի աշխարհի, ի բամբ, որ ասէ. «Արթուր կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու գող գայցէ». տե՛ս Ցուցակ Բայերէն ձեռագրաց Զմանոյ վամբի մատենադարամի, Հտ. Բ, «Ամստենմամ Բավարածոն», կազմեցին Հ. Ն. Ակիման, Հ. Հ. Ուկյան, Վիեննա, 1971, էջ 116, մասն Լ. Խաչիկյան, Արտագի Բայկակամ իշխանությունը և Ծործորի դպրոցը, «Բամբեր Մատենադարամի», № 11, 1973, էջ 185:

<sup>3</sup> «Նորիմ Բիմգեղորդ Կիրակէիմ քարոզ վասն մարտու և կատարածի աշխարհի ի բամբ» «Արթուր կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու Տէր տամն գայցէ...», տե՛ս «Գիրք քարոզութեամ որ կոչի Զմեռամ Բատորոր...», Կ. Պոլիս, 1740, էջ 411-415:

<sup>4</sup> «Բարող մեծիմ Գեորգեա բարումեաց պետի և քաջ փաղերայի ի բամբ, որ ասէ «Արթուր կացէք...» ՄՄ ձեռ. 5118, թ. 365բ-370բ:

Նախախնամութիւնն Ասպուծոյ և բարերարութիւնն նորա յանձնայն ժամ յայգին է առ ամենայն արարածու իր, և ունի հոգի, միուրի կեցոցանել զիր արարածու:

Որպէս մայր ողբերդ, որ հանապազ խնամէ զծնունդու որովայնի իրոյ և աչք, և միուր, և խորհուրդը ի վերայ որդոց իրոց քի գործ և ի գիշերի, ի նստիւ ի դան և զնակ ի ճանապարհ, ի ննջել և ի յամնեն», և յամնենայն ժամու միուր ճնադին առ զառակն իր է: Եւ յորժամ հեռանա յաշացն, առանկ դանապահի ի միուր իր, թէ զինչ եղի: Եւ բազում անօամ, զի ճնադն հարկանել զզաւակն և ինքն մորմորի, և յորժամ փեսանէ յարդասու հարեալ զպացն, զպարին աղիքն և արդասու ծորեցունենք:

Նախախնամութիւնն Ասպուծոյ և բարերարութիւնն յամնենայն ժամ յայգին է առ իր արարածու, որպէս հայր որ սիրէ զորդի, հանապազ խրագէ զնա, և աչք և միուր իր ի վերայ նորա է, ի նստիւ ի դան, ի զնակ ի ճանապարհ, ի ննջել և յամնենայն ժամու: Այլ յորժամ հեռանա յաշիցն, առանկ դանապահի ի միուր իր, թէ զինչ եղի: Եւ բազում անօամ, զի ճնադն հարկանել զզաւակն և ինքն մորմորի, և յորժամ փեսանէ յարեալ առաջի ճնադացն, յայնժամ զպարին աղիք ճնադացն, ճնին երիկամունքն և արդասու ծորեցունենք:

Այսպէս և մարդասէրն Ասպուծու, որպէս Հայր զբած և ողորմած ինսանա հայր ի սպենդուածու իր, որպէս ասէ մարզարէին: «Եւ հարկանեմ և ես թշկին»: Այսպէս է մարդասիրութիւնն նորա առ ազգու մարդկան, ևս առանկ առ նրա ծեռնասու աշակերտն, որպէս ասէր խրարակն բանին այսպէս: «Արթուր կացէր»: Ի վերայ այս բանի սրբք ինչ ասեի է: Եսան՝ վասն արթուրուն և երկրորդ՝ հասակի մարդոյ և մահու, երրորդ՝ վասն կարարածի աշխարհի...

(Զննուան, էջ 411):

Ո՞յ է վուն կամ ո՞վ վասն տէրն: Տոնն մնը նմք, և տէր վասն Ասպուծու է, որպէս ասէ առաքեան «Կոր վաճար Ասպուծոյ կինդաւոյ էք...» Զննուան, էջ 412

Եւ արդ, զիրենի է, զի նախախնամութիւնն Ասպուծոյ և բարերարութիւնն նորա յամնենայն ժամ յայգին է առ իր արարածու, որպէս հայր որ սիրէ զորդի, հանապազ խրագէ զզաւակն և ինքն միուր իր և աչք և միուր և խորհուրդը իր է ի վերայ նորա ի նստիւ ի դան, ի զնակ ի ճանապարհ և յամնենայն ժամ: Եւ յորժամ հեռանա յաշիցն, յայնժամ առանկ դանապահի ի միուր իր, թէ զինչ եղի: Եւ բազում անօամ, զի ճնադն հարկանել զզաւակն և ինքն մորմորի, և յորժամ փեսանէ յարեալ առաջի ճնադացն, յայնժամ զպարին աղիք ճնադացն, ճնին երիկամունքն և արդասու ծորեցունենք:

Այսպէս մարդասէր Ասպուծու... ողորմածն Հայրն հանապազ նախախնամութեամբ եայի իր արարածու, որպէս ասէ մարզարէին... «Ես թշկին...»: Եւ արդ, ի վերայ այս բանի բազում ինչ ։ Ասեի է, եսան թէ բանի յեղանակ ևն ընյ և արթուրուն, և յորպիս թնյ զզուցացունել ասելով, թէ՝ Արթուր կացէր:

ՄՄ Ճն. 5118, թ. 365թ-366ա:

Գիրենի է, զի նախ մարդն ասի տոնն Ասպուծոյ, վաճարուէր Ասպուծու է, որպէս ասէ առաքեան. «Կոր վաճար էք Ասպուծոյ կինդաւոյ...» (ՄՄ Ճն. 5118 թ. 368ա)

Արդ, զիրենի է մնզ, թէ ո՞վ է վուն և կամ ո՞վ վասն տէրն: Եւ արդ, վունն մարդս է և տէր վասն Ասպուծու է: Որպէս և ասէ առաքեան. «Կոր վաճար Ասպուծոյ կինդաւոյ էք»

Ստորև ներկայացվում է ժարողի ժննական բնագիրը համաձայն Երևանի Մասնադարանի հետևյալ ձեռագրերի:

A = 4749

Ճառընտիր: Ժամանակ՝ 1575 թ.: Վայր՝ Ապարանից վանք, Վարագ: Գրիչ՝ Կիակոս արդ.: Ստացող՝ Հերապետ արդ.: Թերթ՝ 505: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ բակայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 29: Բնագիր՝ թ. 370ա-374ա:

B = 3791

Ճառընտիր: Ժամանակ՝ ԺԵ դ. (1453-ից առաջ): Գրիչ՝ Կարապետ, տեր Պողոս, քղուլմսիխ: Կազմող՝ Վարդան: Ստացող՝ Հովհաննես: Թերթ՝ 724: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 35: Բնագիր՝ թ. 443ա-446ա:

C = 3772

Ճառընտիր: Ժամանակ՝ ԺԵ դ.: Գրիչ՝ Ստեփանոս, Թումա սրկ.: Ստացող՝ Դամբայ, Վահրամ միտ., Հովհաննես: Թերթ՝ 527: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 27: Բնագիր՝ թ. 400թ-405թ:

D = 228

Ժողովածոն: Ժամանակ՝ 1457 թ.: Վայր՝ Դերձկո անապատ: Գրիչ՝ Սիմեոն կր.: Ստացող՝ Հակոբ եպս.: Թերթ՝ 244: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 19: Բնագիր՝ թ. 151ա-157թ:

E = 4774

Ճառընտիր: Ժամանակ՝ ԺԶ դ.: Գրիչ՝ Գրիգոր արդ.: Ստացող՝ Հոհաննես արդ.: Ովհաննես փիլիսոփոս: Թերթ՝ 497: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 27,33: Բնագիր՝ թ. 337թ-341թ:

F = 605

Ժողովածոն: Ժամանակ՝ ԺԵ դ. (1671-ից առաջ): Գրիչ՝ Կիրակոս արդ.: Թերթ՝ 79: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 17-25: Բնագիր՝ 82ա-90ա:

G = 3239

Ժողովածոն: Ժամանակ՝ 1671-1675 թթ.: Վայր՝ Ս. Գևորգ: Գրիչ, ստացող՝ Զամրիա՝ երեց: Թերթ՝ 276: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրգիր, ոլորգիր: Տող՝ 19: Բնագիր՝ թ. 200ա-208ա:

H = 2890

Ժողովածոն: Ժամանակ՝ 1718 թ.: Վայր՝ Վան: Գրիչ, ստացող՝ Թումա Մոկացի: Եթերթ՝ 376: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 32: Բնագիր՝ 284թ-287թ:

**ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՄԱՐԿՈՍԻ  
ԱԻԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԵՆԵ**

«Արդ 1. արքուն կացել<sup>2</sup>. զի ոչ գիտեմ. թէ յորում ժամու տէր տանն գայցէ. յերեկորեա երէ՝ ի մէջ գիշերի. երէ՝ ի հաւախասի եւ երէ՝ ընդ առաւատն<sup>3</sup>: Գուցէ եկեալ յանկածակի<sup>4</sup> գտանիցէ զձեզ ի բուն<sup>5</sup>: եւ զոր ձեզ ասեմ. ամենցուն ասեմ. արքուն կացել<sup>1\*</sup>: եւ թէ<sup>6</sup> գիտէր տանուտէրն՝ յորում<sup>7</sup> պահու<sup>8</sup> գող գայր՝ հսկէր եւ ոչ տայր բոյ ական հատանել<sup>9</sup> գտան<sup>10</sup> իւրոյ<sup>11</sup>: Նոյն-պէս եւ դուք եղերում պատրաստ. զի յորում ժամու ոչ ակն ունիցիք. զա Որ-դին մարդոյ<sup>2\*\*</sup>»<sup>12</sup>:

Նախախնամութիւն Աստուծոյ եւ բարերարութիւն Նորա յամենայն ժամ յայտնի է առ ամենայն արարածս իւր<sup>13</sup>, եւ ունի հոգի, միտ՝ ի կեցուցանել զիւր արարածս<sup>13ա</sup>: Որպէս մայր<sup>14</sup> որդեսէր, որ հանապազ խնամէ<sup>15</sup> զծնունդս որովայնի իւրոյ եւ՝ աչք, եւ՝ միտք, եւ՝ խորհուրդ<sup>16</sup> ի վերա որդոց իւրոց<sup>17</sup> ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան եւ գնալ ի նանապարի, ի ննջել եւ ի յառնել<sup>3\*</sup><sup>18</sup>, եւ յամենայն ժամու միտք ծնաւդին առ զաւակն իւր է<sup>19</sup>: եւ յորժամ հեռանա յաշացն<sup>20</sup> եւս<sup>21</sup> առաւել տագնաապի ի միտս իւր եւ հոգա, թէ զի՞ն եղեւ: Որպէս եւ մեծ վարդապետն Հայոց Սարկաւագ ասէ ի գիրս<sup>22</sup> Դատաստանաց վասն ծնաւլացն, թէ՝ «ի հարկանել զգաւակն եւ ինքեանք մորմու-ին քան զնոսա: Ապտակեն եւ ինքեանք մաղկատեն<sup>23-24</sup>, մանաւանդ յորժամ տեսանեն յարտասուս հարեալ զգաւակն<sup>25</sup>, յայնժամ<sup>26</sup> զալարեն աղիքն<sup>27</sup> եւ նմլին երիկամունքն եւ արտասուեն ընդ տղայոցն<sup>28</sup>: Այսպէս եւ մարդասէրն Աստուած՝ Հայրն գրութեանց եւ Աստուածն ամենայն միխթարութեանց<sup>29</sup> նա-խախնամութեամբ հայի յիւրական<sup>30</sup> ստեղծուածս: Որպէս ասէ մարգարէիւմ<sup>31</sup>. «Հարկանեմ եւ ես թշշկեմ<sup>32</sup>, եւ ոչ ոք իցէ, որ հանիցէ զձեզ ի ձեռաց ի-մոց<sup>4\*</sup><sup>32ա</sup>: Այսպէս եւ մարդասիրութիւն Աստուծոյ եւ խնամարկութիւն նորա առ ստեղծուածս իւր, եւս առաւել՝ իւր ձեռնասնունդ աշակերտսն, որ ասէր խրատական բանիւն<sup>32բ</sup>.

Արքուն կացել այսուհետեւ<sup>33</sup>. զի ոչ գիտեմ. թէ ե՞րբ տէր տանն գայցէ<sup>34</sup>.

Գովեի է<sup>35</sup> արքնութիւն եւ յոյժ պիտանի, մանաւանդ, որ հոգոյ աչաւէն են արքուն, զի թէ<sup>36</sup> հոգովն ի բուն է<sup>37</sup> զի՞նչ աւգուտ իցէ<sup>38</sup> մարմնոյ արքնու-թիւնն, քանզի մարդ<sup>39</sup> մարմնով արքուն լինելով<sup>40</sup> բազում անգամ մեղս

1\* Մարկ. ԺԴ 35-36:

2\* Ղուկ. ԺԲ 39-40:

3\* Սղմ. Ա. 2, Բ օր. Զ 7, ԺԱ. 19:

4\* Բ օր. ԼԲ 39:

գործէ<sup>41</sup>: Քանզի են, որ բազումք արթնանան<sup>42</sup> ի գիշերի եւ գնան<sup>43</sup> ի շնուրին եւ ի գողութիւն, ի սպանութիւն եւ յայլ բազում ինչ<sup>44</sup> գործս չարեաց: Եւ զի՞նչ շահ եւ աւգուտ է այնպիսի արթնութիւն<sup>45</sup>: Լաւ էր նմա<sup>46</sup>, թէ ի բուն էր անմեղութեամբ<sup>47</sup>, եւ ոչ յայնպիսի չար եւ ի պիդ<sup>47ա</sup> արթնութեան: Այլ այսպէս պարտ է լինել արթուն՝ յառնել ի գիշերի, արթուն եւ զուարթուն անձամբ, սուրբ մտալք եւ ուղիղ խորիրդով գնալ<sup>48</sup> ի դուռն եկեղեցոյն, անկանել առաջի Աստուծոյ, յիշել<sup>49</sup> զմեղս իւր եւ ասել, թէ<sup>49ա</sup> մեղա<sup>50</sup>, խոստովանել<sup>51</sup> զմեղսն արտասուալք եւ ասել, ըստ մարգարէին. «Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ Քեզ Աստուած վասն իրաւանց եւ արդարութեան Քո<sup>5\*</sup>»<sup>51ա</sup>: Եւ կամ արթուն լինել եւ ածել զմտաւ զաւը մահուանն, եւ զբակտումն հոգոյն<sup>52</sup> ի մարմնոյն դառն<sup>53</sup> բաժանմամբ<sup>54</sup> եւ զգերիլն ի գերեզմանին<sup>55</sup> մինչեւ յաւրն ահեղ դատաստանին: Արթուն լինել եւ զմտաւ ածել<sup>56</sup> զդատաստանն արդար եւ զատեանն անաչառ<sup>57</sup>, զդատաւորն անկաշառ եւ զիրեշտակսն անողորմ<sup>58</sup>, եւ<sup>59</sup> ածել զմտաւ զբազմութիւն մեղաց բոց<sup>60</sup> եւ ասել<sup>61</sup>. Աւա՛ղ, թէ բնուութիւն լինելոցն է վասն<sup>62</sup> ամենայնի, զոր գործեցի, եւ սև չունիմ պատասխանի: Արդ, զի՞նչ գործեցից եւ կամ<sup>63</sup> ո՞ւր փախեաց եւ կամ ո՞ւր բագեաց<sup>64</sup> յերեսացն Աստուծոյ: Ո՞վ եղկելի<sup>65</sup> անձն իմ բազմամեղ եւ չարեալ լի, ընդէ՞ր կաս անհոգ ի բուն անզարքչելի<sup>66</sup>, արթուն լեր<sup>67</sup>, զի ոչ զիտես<sup>68</sup>, թէ երբ<sup>68ա</sup> «տէր տանն գայցէ»: Այն<sup>69</sup> է արթնութիւն մարդոյն, որ զՏեառն գալուստն զմտաւ ածէ<sup>70</sup>. զայս ասէ<sup>71</sup>, հառաչէ, հեծէ եւ յոզոց հանէ<sup>72</sup>, լա եւ արտասուէ, եաշի եւ մաշի վասն մեղացն, զոր զիտէ յանձն իւր: Այլ եւ ի սպաննալեաց գեհենին<sup>73</sup> եւ ի յերկիւղէ տանջանացն ի լալ աչացն եւ ի կրնտել<sup>74</sup> ատամացն: Այս է արթնութիւն, զոր զգուշացոյց<sup>75</sup> Տէրն, այս է հսկելն, վասն որոյ պատութեաց Տէրն մեր ասելով.

Արթուն կացէք, զի ոչ զիտէք երբ տէր տանն գայցէ՝ յերեկորեա թէ՞ ի մէջ գիշերի. թէ՞ ի հաւախտաւի եւ թէ՞ ընդ առաւաւտս.

Արդ, զիտելի է մեզ, թէ<sup>76</sup> ո՞վ է տունն եւ կամ ո՞վ տանն տէր<sup>77</sup>: Եւ արդ, «տունն» մարդու է, եւ «տէր տանս» Աստուած է<sup>78</sup>: Որպէս եւ ասէ առաքեալ<sup>79</sup> «Դուք տանար Աստուծոյ էք<sup>6\*</sup>»<sup>80</sup>: Որպէս եւ ասէ Աստուած մարգարէիւն<sup>81</sup>, թէ՝ «Գնացից ի նոսա եւ բնակեցայց ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ<sup>7\*</sup>»: Եւ դարձեալ ասէ Պաւոս<sup>82</sup>. «Որ ապականէ գտանար Աստուծոյ<sup>83</sup>, ապականեսցէ զնա Աստուած յաւիտենական տանջանալք<sup>8\*</sup>»: Եւ արդ<sup>84</sup>, եթէ մեմ տուն Աստուծոյ՝ պարտիմք մաքրիլ

5\* Աղմ. ձժԸ 62:

6\* Ա. Կորնք. Գ 16:

7\* Ղեւտ ԻԶ 12:

8\* Ա. Կորնք. Գ 17:

զմեզ եւ զարդարել, զի եկեալ հանգիցէ ի մեզ Աստուած, քանզի ի ժանդ եւ յաղտեղի<sup>85</sup> արոս ոչ հանգի<sup>86</sup> Աստուած<sup>87</sup> անմահ Թագաւորն<sup>87ա</sup>, եւ ոչ բնակէ ի մարմին, որ լի է մեղալ<sup>88</sup>: Խսկ արդ, եթէ մարդս է տունն Աստուծոյ<sup>89</sup> եւ Աստուած է Տէր տանն<sup>90</sup>, պարտ է եւ արժան մաքրել եւ յարդարել, զգաստ<sup>91</sup> եւ արբուն լինել<sup>92</sup>, քանզի ոչ ո՛վ գիտէ, «թէ յորում ժամու Տէր տանն գայցէ. յերեկոյս թէ՝ ի մէջ գիշերի, թէ՝ ի հաւախաւսի, թէ ընդ առաւաւս. գուցէ<sup>92ա</sup> եկեալ գտանիցէ զձեզ անպատրաստ»<sup>93</sup>: Եւ զայս գիտել պարտ է, թէ<sup>94</sup> ո՞ր է «Երեկոյն»<sup>94ա</sup> եւ «մէջ գիշերին» եւ կամ «հաւախաւսն» եւ «առաւաւսն»: «Երեկոյն» զծերութիւն ասէ, «մէջ գիշերին»՝ զերիտասարդութիւն, «հաւախաւս»՝ զմանկութիւն<sup>95</sup>, «առաւաւս»՝ զտղայութիւն<sup>96</sup>: Եւ<sup>97</sup> ընդէ՞ր զծերութիւն «Երեկոյ» կոչէ. զի երեկոյն վերջը է աւուրն եւ մուտք է գիշերոյն<sup>97ա</sup>, եւ արեւն ի մուտս է, մտանէ ի մայր իւր<sup>98</sup>, եւ այլ ոչ եւս երեւի եւ խաւար ծածկէ զամենայն<sup>99</sup> զերկիր, եւ ամենայն գործաւորք դադարեալ խափանին<sup>100</sup>, նանապարհորդք դադարեն<sup>101</sup> ի գնացից, հողագործք եւ ամենայն արհեստաւորք<sup>102</sup> խափանին եւ այլ ոչ գործեն<sup>103</sup>: Այսպէս<sup>104</sup> եւ է<sup>105</sup> ծերութիւն: Զոր աւրինակ, որ յերեկոյն հասեալ<sup>106</sup> յաւրէն այլ ոչ եւս<sup>107</sup> կա, նոյնպէս եւ՝ ի ծերոց ժամանակէն: Եւ որպէս յերեկոյին ամենայն գործք եւ արուեստք<sup>108</sup> խափանին եւ այլ ոչ գործեն<sup>109</sup>: Այսպէս եւ<sup>110</sup> կեանք եւ զաւրութիւն ծերոց խափանեալ է<sup>110</sup>, զի աչքն ի լուսոյ պակասեալ եւ բերանն ի բարբառոյ<sup>111</sup>, ականցն՝ ի լսելոյ եւ ժիբն՝ ի հոտոտելոյ եւ ոտքն՝ ի գնալոյ<sup>112</sup>, ձեռքն՝ ի գործելոյ<sup>113</sup>, գոյն երեսաց ցամաքի եւ մարմինն բարշամի, միսն հալի եւ զաւրութիւն պակասի<sup>114</sup>, ալիքն ի բխութեն<sup>115</sup> ի սպիտակութիւն դառնա եւ ի դեղնութիւն փոխի<sup>116</sup>, պիտանին անպիտանանա<sup>117</sup> եւ լաւն վատրարանա<sup>118</sup> յաչս տեսողաց, սիրելեացն ատելի բուի եւ բարեկամացն անպիտան երեւի, մաւտաւորացն<sup>119</sup> զարշեի եւ հեռաւորացն՝ յոյժ աղտեղի: Բարեկամքն հեռանան եւ ծանաթքն աւտարանան, ընտանիքն վիսան եւ դուստր եւ որդիքն<sup>120</sup> պշգան, երես դարձուցեն եւ ասեն. Չսատակեցաւ<sup>121</sup> ծերս, չպակասեաց ի մէնջ ձայն<sup>122</sup> սորա, ձանձաղեալ է եւ խոփեալ, ոչ գիտէ զկարգ խաւսից, յայլոց բան անկանի եւ զաւելին խաւսի: Զծերութիւն իւր մոռացեալ է եւ զայլոց հոգս հոգա եւ զանպատեհս բարբառի: Պակասեալ է ի խելաց եւ ոչ գիտէ զինչ խաւսի: Գործելոյ չէ ի բան եւ զկերակուրն շատ ուտէ<sup>123</sup>: Ո՞վ ծերք, այդ է պատի ծեր, եւ զայսպիսի եպերանաց բանս շահիք ի ծերութեան ձերում: Ընդէ՞ր կայք հեղգացեալք. աւրդ<sup>124</sup> այդ ի հունաս է, եւ մահու հրաւէր հասեալ<sup>125</sup>: Աւրդ երեկոյացեալ՝ ընդէ՞ր կայք անհոգ եւ զաւրս ցերեկ՝ դատարկ<sup>126</sup>: Այս է ծերութիւն եւ «Երեկոյն»:

Իսկ «մէջ գիշերին» զերիտասարդութիւն ասէ: Եւ ընդէ՞ր «ի մէջ գիշերի» ասէ զերիտասարդութիւն<sup>127</sup>. վասն մեղացն եւ չար գործոցն, որ յերիտասարդն գործի, զի երիտասարդին աչքն սրատես է եւ ականջն արագալուր,<sup>128</sup> բերանն արագախաւս<sup>129</sup> եւ լեզուն դիւրաշարժ<sup>130</sup> է եւ ձեռքն՝ յաջողակ, ժիմքն ի բաց է<sup>131</sup> եւ ոտքն՝ արագագնացգ<sup>132</sup>: Հինգ զգայարանին ամենայն ամրամաւեցն կազմէ եւ պատրաստ է, զոր եւ<sup>133</sup> կամի՝ կարէ գործել, զի զաւրութիւն մարմնոյն ընդ ինքեան է, եւ զամենայն զգայարանին<sup>134</sup> ի գործ մեղացն պահէ հանապազ անդարձ եւ անզեղ ի չարիս. զմեղս եւ զգործս անաւրէնութեան խորիի ի տուէ եւ ի գիշերի: Եւ ոչ ոք երբէք յիշէ զաւր մահուն եւ կամ զմտաւ ածէ զդատաստանն ահեղ եւ զհատուցումն անշառ, զիուրն անշէց եւ զորդն անենուն, զխաւարն արտափին եւ զտարտարոսն ներփին, զիուր գեհենին եւ զատնամանին անդնդային, զլալ աչացն եւ կրնտել ատամացն: Զայս ամենայն ի միտ ոչ ածէ<sup>135</sup>: Վասն այսորիկ Տէր մեր «մէջ գիշերի» եւ խաւարի նման ասէ զերիտասարդութիւն<sup>136</sup>: Ոչ երեկոյ<sup>137</sup> է, զի դեռեւս զգաստ եւ արթուն են մարդիկիք եւ ոչ առաւատ, զի զարթեալ եւ սրափեալ<sup>138</sup> են մարդիկիք ի թմրութենէն քնոյ եւ շարժեալ ի գործ եւ ի պատերազմ եւ ի նանապարհ<sup>139</sup>, զի սկիզբն է լուսոյն: Այլ «մէջ գիշերի» ասէ, զի խաղաղեալ է երկիր եւ մարդիկիք իրրեւ զմեռեալս ամեկեալ դնին յերկիր<sup>140</sup>, եւ ամենայն չարիք գործին ի մէջ գիշերին, զի շնացողին շնան, պոռնիկին պոռնկին, աւազակին աւազակին<sup>141</sup>, գողին գողանան<sup>142</sup>, դարանակալիք<sup>143</sup> յառնեն, զազանին յարձակին եւ<sup>144</sup> գէշ գէշ պատառեն ում եւ հանդիպին, աւաճ խածանեն, կարինք հարկանեն: Եւ ամենայն չարիք<sup>145</sup> գործին ի մէջ գիշերի, նոյնպէս եւ հասակն երիտասարդական<sup>146</sup>: Վասն որոյ<sup>147</sup> Տէրն հրամաեաց արթուն լինել. մի գուցէ հասանիցէ աւր մահուն յերիտասարդութեան<sup>148</sup> եւ մեռանիմի<sup>149</sup> անապաշխար, եւ կորնչիմի<sup>150</sup> զյափիտենական կորուստն:

Եւ կամ<sup>151</sup> «ի հաւախաւսն». ո՞ր է հաւախաւսն<sup>152</sup>, որ է մանկութեան հասակն<sup>153</sup>, զի հաւախաւսն ոչ «մէջ գիշերի» է եւ ոչ խորին<sup>154</sup> «առաւաւտին», զի թէպէտ եւ մերձ է ի լոյսն, բայց սակաւ<sup>154ա</sup> մի ունի ի գիշերոյն<sup>155</sup>: Այսպէս<sup>156</sup> եւ մանկութեան հասակն. թէպէտ եւ ոչ է ի մէջ մեղաց իրրեւ<sup>157</sup> զերիտասարդ, այլ<sup>158</sup> եւ ոչ է առանց մեղաց<sup>158ա</sup>. աչալք եւ մտալք, կամաւե եւ խորիրդով, զի կամին ի չարին է<sup>159</sup>, թէպէտ եւ ոչ գործովք, որպէս «հաւախաւսն», որ ոչ է «մէջ գիշերի»<sup>160</sup> եւ ոչ «առաւաւտ»: Եւ ոչ ոք գիտէ, թէ մահն յորում ժամու հասանի. «ի հաւախա՞ւսն»՝ մանկութեան<sup>161</sup> երէ՞ «յառաւաւտն»<sup>162</sup>, որ է տղայութիւն<sup>163</sup>: Եւ զի՞ կոչէ «առաւաւտ» զտղայութիւն. վասն զի<sup>164</sup> «առաւաւտն» սկիզբն է կենաց մարդկան: Եւ որպէս առաւաւտն ամենայն չարիք խաղաղին եւ խափանին<sup>165</sup>, գողին փախչին, աւազակին թաք-

չին, գազանքն հալածին, շնացողքն լոեն, պոռնիկքն<sup>166</sup> դադարեն եւ ամենայն չարիք խափանեն ի մերձենալ լուսոյն: Եւ ամենայն գործիք եւ գործաւորք<sup>166ա</sup>, որ պէտք են<sup>167</sup> բնութեանս, յառնեն եւ շարժիք<sup>168</sup> ի գործս. Եթէ նանապարհորդութիւն, եթէ հողագործութիւն է եւ ամենայն արուեստք<sup>169</sup>: Այսպէս եւ տղայութիւն աննենգ<sup>170</sup> եւ անխակալք<sup>171</sup>, անմեղք եւ անչարիք զատեալք եւ հեռացեալք յամենայն գործոց<sup>172</sup>, որ ատելիք են Աստուծոյ եւ վնասակարք հոգոց, աւրինակ են<sup>173</sup> արդարոց, որք անմեղութեամբ անցուցին զկեանս իւրեանց եւ եղեն որդիք լուսոյ՝ զատեալք ի խաւարային գնացից<sup>174</sup> գործոց եւ ի գիշերի<sup>174ա</sup> կենցաղոյս: Երանի է տղայոցն<sup>175</sup>, որոց կոչնական ընդ<sup>176</sup> առաւաւտն հասանէ ի տղայութիւն<sup>177</sup>, մի՛ լայք եւ ողբայք զայնպիսին, այլ երանի տուի նոցա, զի հասին<sup>177ա</sup> մերձ ի լոյսն Քրիստոս՝ բարի գործովք զատեալք եւ որոշեալք<sup>178</sup> ի խաւարային գնացից բանսարկութին<sup>178ա</sup> արքուն եւ զուարքուն մտաւք, որպէս Տէրն պատուիրեաց եւ ասաց<sup>179</sup>.

Արքուն կացեք, զի ոչ գիտեք, թէ եր՞ոք տէր տանն գայցէ. յերեկորեա<sup>181</sup>  
թէ՞ ի մէջ գիշերի թէ՞ հաւախաւսի թէ՞ ընդ առաւաւտս.

Եւ ո՞ գիտէ, թէ յորում ժամու եկեալ գտանիցէ անպատրաստ, եւ կորչիցիմք զյաւիտենական<sup>182</sup> կորուստն<sup>183</sup>. մինչ ակն<sup>184</sup> ոչ ունիցիք՝ գա հասանէ աւր մահուն, որպէս եւ Տէրն վկայեաց առակաւոր բանիւն, որ ասէ.

Թէ գիտէր տանուտէրն՝ յորում ժամու գող գա՝ հսկէր՝ արքուն լինել եւ չտայր բոյլ ական հաստանել գտան իւրոյ.

Առակաւք<sup>185</sup> խաւսի Տէրն. «տանուտէր» եւ «տոուն» անուանէ<sup>186</sup>. միթէ՝ զայսմէ տանէ եւ կամ զայսմէ տանուտէրութեան ասէ. բաւ լիցի<sup>187</sup>: Զի ամենայն տուն բակի եւ ամենայն շինութիւն<sup>188</sup> աւերի եւ ամենայն ծնեալ մեռանի<sup>189</sup> եւ դատաստանն Աստուծոյ կա եւ պահի: Այլ «տոուն» ասէ եւ «տանուտէր»: Զոր աւրինակ երկրաւոր տանուտէրք, անհոգացեալք ի գողոց նիրիեն<sup>190</sup> եւ ի քուն լինին, եւ գողք, որ սովոր<sup>190ա</sup> են շրջել եւ գողանալ<sup>190բ</sup>, եկեալ գտանեն ի տանուտէրն ի քուն, զտունն պատառեն եւ<sup>191</sup> զինչսն գողանան<sup>192</sup>: Եւ յորժամ տանուտէրն զարբնու<sup>193</sup> տեսանէ զտունն պատառեալ եւ զինչսն յափշտակեալ, վա՛յ եւ եղու՛կ ասէ, եւ մորմոնի եւ մաղկատի, ճայնէ եւ ճչէ, աղաղակէ, լա, ողբա, հառաչէ<sup>194</sup> եւ արտասուէ, ասէ<sup>195</sup>. Տեսէք եւ ողորմեցէք ինձ. զի՞նչ լինիմ. գողացան աւտարք զվաստակս իմ, յափշտակեցին զամենայն ինչս իմ, առին եւ գնացին, յոյժ աղքատացա. զիարդ ապրիմ կամ որպէս վաստակիմ, վա՛յ ինձ եւ եղուկ եմ ես<sup>196</sup>. զի՞նչ գործեցից եւ կամ զի՞նչ արարից, ոչ գիտեմ: Այսպէս լինի առ ամենայն մարդ յաւր մահուն: «Տուն» է մարմին<sup>197</sup>, «գանձ» է հոգին, «գող»՝ Գարրիէլ. մինչ անհոգացեալ է «տանուտէր»՝ միտքն, եւ թմրեալ է ի քուն մեղաց, գա «գողն»<sup>197ա</sup> Գարրիէլ, պա-

տառէ «զտունն»՝ զմարմինն եւ առնու «զգանձն»՝ զհոգին, արտաքս ելանէ<sup>198</sup> եւ գնա: Եւ ահա<sup>199</sup> ամենայն ինչ յոչինչ<sup>200</sup> եղեւ եւ այլ ոչ ոք կարէ աւգնել եւ կամ ի թիկունս հասանել, բայց միայն ողբն եւ աղաղակն յոլովանա<sup>201</sup>: Զարմացեալ եմ<sup>202</sup> կարի քաջ, զի թէ ասացեալ էր Աստուած՝ պիտի որ ընդ ամենայն<sup>203</sup> աշխարհս մի<sup>204</sup> մարդ մեռանի՝ պարտ էր, որ ամենայն մարդ ահարեկ լինէր եւ ասէր. Վա՛յ ինձ<sup>205</sup> թէ ես իցեմ<sup>206</sup> մահացուն, եւ ինձ գա հասանիցէ աւրն այն սոսկալի եւ ահարկու եւ պատրաստէր զինքն աւուր մահուան<sup>207</sup>: Մեֆ զեղբայրն մեր<sup>208</sup> բաղեմք եւ զիոգիսն<sup>209</sup> անտես առնեմք<sup>209ա</sup>, եւ յայնմանէ անհանգուցեալ հեշտանամք<sup>210</sup>, եւ միմեանց, Դու ապրիս, ասեմք<sup>211</sup>: Զձնեալն<sup>212</sup> ի մէնջ փոքր<sup>213</sup> ի գերեզմանի<sup>214</sup> դնեմք եւ մեֆ ասեմք. Թէ ծերանամքն՝ ապաշխարեմք: Ո՛վ անմիտ<sup>215</sup>, հեգ<sup>216</sup> եւ թշուառական մարդ<sup>217</sup>. այդ, որ ի քէն ծնաւ, ընդէ՞ռ ոչ ծերացաւ. բարէ<sup>218</sup> անմտութեանս մերում: Զի արրեալ եմք եւ ոչ ի գինույ, վասն որոյ ասէ Տէր. «Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արքեցութեամբ եւ հոգովք աշխարհականաւք: Եւ հանկարծակի հասանիցէ ի վերա ձեր աւրն այն, զի իբրև զորոգայթ հասանիցէ ի վերա ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Արքուն կացէք այսուհետեւ եւ յամենայն ժամ աղաւրս արարէք<sup>9\*</sup>»: Արդ, պարտ է ունեկնդիր լինել Տեառն խրատու<sup>218</sup> եւ զգուշանալ յարքեցութենէ մեղաց եւ ի հոգոց աշխարհական զբաղմանաց, արքուն եւ զուարքուն մտալք<sup>219</sup> յիշել զաւր մահուն եւ ածել զմտաւ զդատաստանն Աստուծոյ եւ<sup>220</sup> զարդար հատուցումն ըստ գործոց յանաշառ ատենին անկաշառ Դատաւորէն<sup>221</sup>: Եւ սկիզբն առնել<sup>222</sup> ապաշխարութեան, զմեղս քաւել խոստովանութեամբ, պահաւք եւ ողորմութեամբ, աղաւրիւք եւ արտասուալք, զի խոստացելոց բարեացն հասանել կարասցուք շնորհաւք Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի<sup>223</sup>.

## ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր. Ա Երանելոյն Յովիաննու Ոսկերերանի ասացեալ է ի վեցերորդ կիրակէին զմեկնութիւն Աւետարանին: Ը Հինգերորդ Բ շաբթի ի Մարկոսի Աւետարանի մեկնութենէ ասացեալ սուրբ Վարդապետի: Ը Ի Մարկոսի Աւետարանի մեկնութենէ սուրբ Վարդապետի ասացեալ: Հ Երանելոյն Յոհաննու Ոսկերերանի ասացեալ ի վեցերորդ Կիւրակէին զմեկնութիւն Աւետարանին:

Բնագիր. 1 C չի Արդ: 2 D կաց: 3 D առաւատու: 4 D չի յանկարծակի: 5 D անպատրաստ վիւ. ի քուն: 6 D եթէ վիւ. եւ թէ: 7 F թէ յորում: 8 D ժամու: 9 D հատել: 10-11 F ի սուն իւր: D ի տան իւրում: 12 D մարդոյ: Այլ որ ձեզդ ասեմ եւ ամենեցունդ ասեմ. Արբուն կացէֆ: 13 CD առ իւր արարած: G ամենայն արարած Նորա վիւ. արարած իւր: 13ա G չի եւ ունի հոգի... արարած: 14 D հայր վիւ. մայր: 15 D խրատէ վիւ. խնամէ: 16 D խորիուրդ իւր: 17 C նոցա վիւ. որդուց իւրոց: 18 ADE չի ննջել եւ ի յառնել: 19 D չի միտք ...իւր է: 20 CD յաշիցն: 21 D չի եւս: 22 G Որպէս ասէ ի գիրս Դատաստանաց: BC Դատաստանաց գիրն յիշէ եւ ասէ վիւ. Որպէս ...Մարկարագ ասէ ի գիրս: 23-24 F մորմոնին վիւ. մաղկատեն: 25 F առաջի իւրեանց: D առաջի ծնաւղացն վիւ. զզաւակսն: 26 D յանժամ: 27 G յաղիբն: 28 CDF արտեւանունքն արտասուս ծուրացուցաննեն (Ծ բուրացուցաննեն) վիւ. արտասուսն ընդ տղայոցն: 29 D գրած Հայրն եւ ողորմած վիւ. Հայրն գրութեանց ...մխիթարութեանց: 30 DF յիւր: 31 DF մարգարէն: 32 F բժիշկեմ: 32ա G չի եւ ոչ ով... իմոց: 32բ G եւ թէ որպէս գրա հայր ի վերո որդուց իւրոց, այնպէս գրասցէ Տէր յերկիւղածս իւր մանաւանդ ձեռնասուն աշակերտսն, որոց ասէր խրատական բանիւ այսպէս վիւ. Այսպէս եւ մարդասիրութիւն ... բանիւն: 33 G չի այսուհետեւ: 1-34 EH չի Արդ ... գայցէ: 35 D Զի ոչ գովելի է: 36 D չի թէ: 37 D քուն է եղբայրն: 38 D է: 39 CDFGH չի մարդ: 40 DF լինելն: 41 CDFG գործէ մարդ: 42 G Զի որ արքնանա գիշերի եւ գնա վիւ. Քանիզի են ... գնան: 43 H չի ի գիշերի եւ գնան: 44 CD ի շինութիւն եւ կամ այլ ինչ: 45 H արքնութիւն զինչ շահ եւ աւգուտ է քան թէ վնաս վիւ. եւ զի՞նչ ...

արքնութիւն: 46 A նոցա վիւս. նմա: 47 A անմեղութեամբ ի քուն վիւս. թէ ... անմեղութեամբ: 47ա DH պեղծ: 48 CD դիմել վիւս. գնալ: 49-49ա A յիշել զԱստուած եւ ասել թէ վիւս. յիշել ... թէ: 50 CD զԱստուած վիւս. զմեղս իւր ... մեղա՛: 51 A խոստովանեայ: 51ա DF fn, Տէր: 52 F ոգոյն: 53 DEFG ահագին վիւս. դառն: 54 CDF անջատմամբն վիւս. բաժանմամբն: 54-55 F տես եւ գերեզմանն, որ ի նմայ տքնելոց ես մինչեւ աւրն դատաստանին, ած զմտաւ գերկրաւոր զընտանիս, զմի աւուր տես, թէ քանի նեղսրտութեամբ եւ ասաց. Ո՞հ որչափ երկրակեաց գերեզմանն, ած զմտաւ վիւս. բաժանմամբ ... ի գերեզմանին: 55-56 DEFG չիւ մինչեւ ... զմտաւ ածել: 57 CDH չիւ եւ զատեանն անաշառ: 58 CDH չիւ եւ զերեշտակսն անողորմ: 59 H Արքուն լինել եւ խորհել բազմութիւն մեղաց վիւս. եւ ... մեղաց: 60 DG իւրոց վիւս. fng: 61 D ասա: 62 DF չիւ վասն: 63 D չիւ եւ կամ: 64 A բազեցայց: 65 AFH անձն իմ եղկելի: D անձն եղկելի: 66 FH չիւ ընդէ՞ր ... անզարքնելի: CF անզարքելի: 67-68 A լերուք ... գիտէֆ: 68ա AD յորում ժամու վիւս. երք: 69-70 ADFG չիւ Այն է ... ածէ: 71-76 ACDFH չիւ զայս ասէ ... թէ: 72 H յոգոց հանէ, հեծէ: 73 H զեհենւոյն: 74 AH կրնել (այսպիս և այսուր): 75 A գուշացոյց: 77 DF տէր տանն: 78 D Աստուած է Տէր տացց: 79-80 CD Որպէս ասաց առաքեալ Պաւղոս: «Դուք էք տանար Աստուծոյ կենդանոյ» վիւս. Որպէս եւ ... էֆ: 81 DF Որպէս ասաց Աստուած վիւս. Որպէս ... մարգարէիւն: 82 CDF չիւ Պաւղոս: 83 D զտանար Աստուծոյ ապականէ: 84 DEGF իսկ վիւս. եւ արդ: 85 DCF չիւ եւ աղտեղի: 86 DF նստի վիւս. հանգի: 87 G չիւ Աստուած: 87ա F Թագաւորն Աստուած: CD Թագաւորն անմահ: 88 G չիւ եւ ոչ բնակէ ... մեղաւէֆ: D եւ յաղրոյ տուն ոչ բնակի, զի անպատեհ է վիւս. եւ ոչ ... մեղաւէֆ: 89 D մարդն տուն Աստուծոյ է: 90 G Աստուած ... տանն: 91-92 CD մաքրել եւ արքուն լինել վիւս. մաքրել ... լինել: D չիւ յարդարել, զգաստ: 93 GF չիւ գուցէ ... անպատրաստ: 94 D իսկ արդ վիւս. եւ զայս ... թէ: 92ա-94ա CD առաւաւտս գուցէ եկեալ գտանիցէ զձեզ անպատրաստ: իսկ արդ, ո՞ր է երեկոյն վիւս. առաւաւտս ... «երեկոյն»: 95 CD չիւ «հաւախաւս»՝ զմանկութիւն: 96 F զտղայութիւնս: 97 G եւ թէ ընդէր կոչէ երեկոյ զծերութիւն: 97ա DF երեկոյն մաւտ է գիշերոյն եւ վիւս. զի երեկոյն ...

գիշերոյն: 98 F չիմ ի մայր իւր: 99 G չիմ զամենայն: 100 FG գործք խափանին: 101 D դադարին: 102 A արեստաւորք: DF արուեստք: 103 CDF չիմ եւ այլ ոչ գործեն: 104 F Այսպէս է: 105 FG չիմ է: 106 F յերեկոյին ժամուն վիճ. յերեկոյն հասեալ: 107 G չիմ եւս: 108 G չիմ եւ արուեստք: 109 D գործին: 110-114 AF Սոյնպէս կեանք եւ զարութիւն ծերոց խափանեալ է, բանզի ականջն ի լսելոյ է խլացեալ, աչքն ի տեսանելոյ ի լուսոյ է պակասեալ, երեսն ի գոյնոյ է ցամաքեալ, ձեռքն ի գործոյ է, ոտքն ի գնալոյ: CD Այսպէս է եւ կեանք եւ զարութիւն ծերոց խափանեալ է, զի աչքն ի լուսոյ է պակասեալ բերանն ի բարրառելոյ, ոտքն՝ ի գնալոյ, ձեռքն՝ ի գործելոյ, ականջն՝ ի լսելոյ, գոյն երեսացն ցամաքեալ է, զարութիւն պակասեալ է, ալիքն ի թխութենէն դարձեալ է ի սպիտակութիւն կամ ի դեղնութիւն վիխ. Այսպէս ... պակասի: 110ա A խափանեալ է ծերոյն: 111 H խաւսելոյ վիճ. բարրառոյ: 112 H ոտքն ի գնալոյ եւ ֆիմքն ի հոտոտելոյ: 113 DFG ձեռքն ի գործելոյ: 115-116 D ի սեւութենէ դարձեալ ի սպիտակութիւն եւ ի դեղնութիւն վիճ. ի թխութենէ ... փոխի: 117-126 ACF անպիտան (A անպիտանացեալ) է աչս տեսողաց, սիրելեաց՝ թշնամի, բարեկամաց ատելի, մաւտաւորաց (A մաւտեւորաց) յոյժ ատելի եւ մերձաւորքն այսպէս (F չիմ այսպէս) ասեն. Զսատակեցաւ ծերս, չպակասեաց ի մէնց ձայն դորա, խոփեալ է, խելագարեալ է, զարկէֆ, որ սատակի, բանի չէ յաւգուտ, զկերակուրն յոլով նաշակէ, ուստի՝ պատրաստեսցուք դորա հանդերձ, կերակուր ո՞վ տայցէ դմա: Վայ է ի վերայ ծնրութեան, ապաշաւցէֆ ի վերա անպիտանութեանդ ձեր, ընդէ՞ր էֆ հեղգացեալֆ, որ «երեկոյ» էֆ մոտեցեալֆ, մահու հրաւէրն է հասեալ, ընդէ՞ր կայք անհոգ եւ դատարկ զսակաւ աւուրքդ վիճ. անպիտանանա ... դատարկ: 118 CD չիմ եւ լաւն վատքարանա: 119 CD մաւտեւորացն յոյժ երեւի: 120 A որդիկն: 119-121 D Մերձաւորքն այսպէս ասեն. Զսատակեցաւ վիճ. մաւտաւորացն գարշելի ... Զսատակեցաւ: 122-123 ACD ձայն դորա խելագարեալ է, զարկէֆ, որ սատակի, լծեցէֆ, որ մեռանի, բանի չէ յաւգուտ, զկերակուրն հոլով նաշակէ: Ուստի՝ պատրաստեսցուք հանդերձ, կերակուր ո՞վ տայցէ սմա: Վայ է ի վերա ծերութեան. ապաշաւեալ ի վերա անպիտանութեան:

Ով ծերք, ընդէ՞ր կայք հեղգացեալք, աւր երեկոյ է, արեւն ի մուտս է, արդ, ի հունձան է, մահու է հրաւէր, ընդէ՞ր կայք անհոգ եւ դատարկ զաւր ցերեկ փխ. ճայն ... ուտէ: 124 A աւուրքդ: 125 H եկեալ է փխ. հասեալ է: 127 AG չիք եւ ընդէր ... զերիտասարդութիւն: 128 DF չիք ականջն արագալուր: 129 F երագախաւս: AH բաղրախաւս: 130 ADFGH չիք եւ լեզուն դիւրաշարժ (Հ դիւրաշարժ): 131 CF ֆիմքն անուշահոտ է, ձեռքն աջողագործ է: DF արագահոտ փխ. ի բաց է: 132 H փութագնացք փխ. արագագնացք: 133 CD սգախիւնքն կազմ են եւ պատրաստք զինչ եւ փխ. հինգ զգայարանքն... զոր եւ: 134-136 CDF Բայց դժուարաւ գործէ զբարին, վասն զի երիտասարդ է, աչքն արատահայեցուածս, բերանն ի դատարկարանութիւն է եւ (D չիք եւ) աղտեղի խաւսս, որ ոչ է (F չիք է) ի պէտս հոգոյ, ձեռքն ի շաւշափել եւ ի գործել զմեղս եւ կամի հեղուկ զարիւն ամբիծ եւ անմեղ անկանելն ի լուր մեղաց եւ ի ճայն գուսանաց (F գաւսանաց) եւ փափկասաց եղանակաց, որ զիոգի եւ զմարմին եւ զմիտս երիտասարդին ի կորուստ բարշէ, ի ձեռն աղտեղի խաւսիցն, ոտքն ի թատերս եւ յանպատրաստ գնացս է չարեաց նանապարհին անդարձ եւ անգեղջ է ի մեղս եւ ի չարիսն, միտքն եւ խորհութիւն ոչ է ի բարին, այլ զչարն խորիի ի տուէ եւ ի գիշերի՝ մոռացեալ զաւր մահուն եւ զդատաստանն Աստուծոյ: Վասն այնորիկ Տէրն խաւարի եւ գիշերի նման ասէ զերիտասարդութիւն (D չիք զերիտասարդութիւն) փխ. ի գործ մեղացն ... զերիտասարդութիւն: 135 H երիտասարդն զայս ամենայն զմտաւ ածէ: 137-139 DF ոչ ի բուն են մարդիկ եւ ոչ առաւաւտ, զի զարթեալ եւ թափեալ ի թմրութենէն եւ շարշեալ (F ժարշեալ) ի նանապարհ եւ ի գործ փխ. Ոչ երեկոյ ... նանապարհ: 140 G չիք յերկիր: F երկրի: 141 D գողանան փխ. աւագակէն: 142 F չիք գողքն գողանան: 143 G չիք դարանակալքն: 144 FG չիք եւ: 145 E վնասի: G վնասս փխ. չարիք: 146 CF երիտասարդութեան: 147 CF չիք Վասն որոյ: 148 FG չիք յերիտասարդութեան: 149 E մեռանիցիմֆ: 150 D կորնչիցիմֆ: EG կորիցիմֆ: 151 CD Գամք փխ. եւ կամ: 152 G չիք ո՞ր է հաւախաւսն: 153 G հասակն մանկութեան: 154 D չիք խորին: 154ա D փոքր փխ. սակաւ: 155 D գիշեր: 156 D Այսպէս է: H Այնպէս: 157-158ա DF իբրև զերիտասարդն ի մէջ մեղաց փխ. իբրև ... մեղաց: 158 D բայց փխ. այլ: 159

G ի չարն է վիւ. զի կամքն ի չարն է: 160 G գիշերի է վիւ. և մէջ գիշերի: 161 DF չիֆ մանկութեան: 162 D ընդ առաւաւտն: 163 D տղայութեան: 164 DF որպէս վիւ. եւ զի՞ ... վասն զի: 165 DF չիֆ եւ խափանին: 166 G պոռնիկիֆ: 166ա DF չիֆ եւ գործաւորք: 167 D ի պէտս են վիւ. պէտք են: 168 CD առաջանան վիւ. յառնեն եւ շարժին: 169 FG չիֆ երէ նանապարհորդութիւնն արուեստք: 170 C անմեղի վիւ. աննենգ: 171 G անոխակալ: 172 DF անմեղ եւ անոխակալ՝ զատեալ ամենայն չար գործոց վիւ. աննենգ ... գործոց: 173 F անմեղի (սխալագրության նշանով. ուղղված): 174 DF չիֆ գնացից: 174ա G չիֆ եւ ի գիշերի: 175 D այնոցիկ վիւ. տղայոց: 176 CD չիֆ ընդ: 177-177ա EG չիֆ ի տղայութիւն ... հասին: 178 D որոշեալ: 178ա A սատանային վիւ. բանսարկուին: 179 DF ասէ: 180-183 AEG գուցէ մինչ վիւ. եւ ո՞ ... զկորուստն: 181 D յորում ժամու վիւ. երբ: 182-184 ABC յերեկորայն, որ է ծերութիւն, ի մէջ գիշերի, որ է երիտասարդութիւն ի հաւախաւսի, որ է մանկութիւն, ընդ (B չիֆ ընդ) առաւաւտն, որ է տղաութիւն (B տղայութիւն: եւ Քրիստոսի փառք յալիտեան. շար. չիֆ): եւ ո՞ գիտէ, թէ որում ժամու եկեալ գտանիցէ անպատրաստ եւ կորնչիցիմք զալիտենական կորուստն մինչ վիւ. յերեկորեա ... մինչ ակն: 185 EG Առակալ: 186 GH չիֆ «տանուտէր» ... անուանէ: 187 HD ասէր. քաւ եւ մի լիցի: 188 H շէն: 189 CD Ամենայն շինեալ քակի եւ ամենայն ծնեալ մեռանի վիւ. Զի ամենայն ... մեռանի: 190-191 CD գնան ի գործս իւրեանց եւ գան յերեկոյին ժամանակն նաշակեալ կերակուր աշխատեալք նիրհեալք, եւ ի քուն մտանեն: Խսկ գողոցն սովորութիւն է շրջելն եւ գողանալն, գան գտանեն զտանուտէրն ի քուն, պատառեն զտունն, առնուն զգանձն, ափշտակեն զինչչն, արտախ ելանեն եւ գնան: H գնան ի գործս իւրեանց եւ կամ թէ հեշտանան ի քունս ... վիւ. Նիրհեն... գողանան: 190ա-190բ AGF չիֆ որ սովոր... գողանալ: 191-192 C չիֆ եւ... եւ: 193 զարքնու տանուտէրն: 194 C չիֆ հառաչէ: 195-196 EG Աւաղ թէ վիւ. ասէ. Տեսէք ... եղուկ եմ ես: H չիֆ ասէ ... եղուկ եմ ես: 197 G մարմին է: F մարդն (սխալագրության նշանով): 197ա H գող գա: 198 G չիֆ արտախ ելանէ: 199 C չիֆ ահա: 200 C ոչինչ: 201 G լացն շատանա եւ կոծն եւ աշխարհն առատանա

վիս. ողբն ... յոլովանա: 202 G եմ եւ: 203 C թէ ամենայն վիս. պիտի ամենայն: 204 G մին: 205 H չիմ ինձ: 206 E եմ վիս. իցեմ: C գրեալն, որ մեռանելոց եմ: 205-207 C վասն մահուն աւուրն: G Վայ թէ ես իցեմ վիս. Վա՛յ ինձ ...աւուր մահուան: 208 A չիմ մեր: 209 CH զիոգին: 209ա C առնեմք եւ մոռանամք: 210 EGF անարգացեալ փարեղանամք (Ե անհոգացեալ) վիս. անհանգուցեալ հեշտանամք: 211 FH չիմ անարգացեալ... ասեմք: 212 F Զենեալն վիս. Զծնեալն: 213 FH չիմ փոքր: 214 C գերեզման: 215 AC չիմ անմիտ: 216 AH հեմ: 217 A չիմ մարդ: 218 E խրառուս: 218-219 BC Արդ, եթէ այտ այդպէս է ապա պարտ է: A Ծերացաւ: Արդ պարտ է վիս. բարէ՛ ...մտամ: 220-221 C չիմ եւ զարդար հատուցումն... Դատաւորէն: G յանաչառ վիս. անկաշառ: 222-223 AD սկիզբն առնել ապաշխարութեան, զմեղս խոստովանել, զանցանս քաւել եւ խոստացելոց բարեացն հասանել ի Քրիստոս ի Տէր մեր, որում փառք վիս. Եւ սկիզբն առնել... Յիսուսի Քրիստոսի: 219-223 H Արդ, պարտ է ամենայն ումեք յիշել զաւը մահուն եւ զմտաւ ածել զժամ դատաստանին եւ հոգ տանել զղջման խոստովանութեան պահոց եւ աղաւրից. սրբութեան եւ պարկեշտութեան գրութեամբն եւ ողորմութեամբն եւ տրամք տնանկաց, զի խոստացելոց բարեացն հասանել կարասցուք շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի վիս. յիշել զաւը մահուն... Յիսուսի Քրիստոսի: